

Մասնագիտության նկարագիրը	
Պաշտոնի /զբաղմունքի/ անվանումը	Մասնագիտությունը՝ 2-13.93.01 «Չարդակիրառական նշանակության գորգագործական իրերի պատրաստում» որակավորումը՝ 2-13.93.01.03-3 «Ասեղնագործող- ժանեկագործող»
I. Դերը՝	<p>Ասեղնագործող-ժանեկագործողը հագուստի նորաձևության տներում, ուսումնական հաստատություններում, գեղագիտական մշակութային կենտրոններում, ինչպես նաև անհատական գործունեությամբ զբաղվելիս կատարում է ձեռքով և ասեղնագործական պարագաներով աշխատանքներ:</p> <p>Ընտրում է նյութեր և պարագաներ, կատարում է եսքիզ և կոմպոզիցիայի կառուցում: Պարզ և բարդ կարատեսակներով, ասեղնագործության և ժանեկագործության տեսակներով, ինչպես նաև համակարգչային մեքենայով ստեղծագործում է դեկորատիվ կիրառական արվեստի գեղարվեստական ձևավորման աշխատանքներ:</p>
II. Խնդիրների բնագավառները	
<u>Խնդիրների բնագավառ 1.</u>	
Աշխատատեղի, սարքավորումների, գործիքների, պարագաների և նյութերի նախապատրաստում	
Աշխատանքային գործընթացը	Նախապատրաստում է աշխատատեղը, անհրաժեշտ նյութերը, գործիքները և սարքավորումները ստուգում է վերջիններիս սարքիչությունը, անհրաժեշտության դեպքում վերացնում է թերությունները:
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> ➤ Աշխատատեղը և անհրաժեշտ նյութերը ընտրված և նախապատրաստված են: ➤ Գործիքները և պարագաները անթերի են: ➤ Համակարգչային մեքենան աշխատում է անխափան: ➤ Անվտանգության կանոնները պահպանված են:
<u>Խնդիրների բնագավառ 2.</u>	
Եսքիզի գծագրում, կոմպոզիցիայի կառուցում, գունային լուծում	
Աշխատանքային գործընթացը	Ընտրում է թուղթը, զարդանախշերի և զարդապատկերների էլեմենտները, գծագրում է Եսքիզը, կատարում է կոմպոզիցիայի կառուցում, գունային լուծում և կատարված Եսքիզը փոխանցում է նախապատրաստված գործվածքի վրա:
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> ➤ Թուղթը, զարդանախշերի և զարդապատկերների էլեմենտները ընտրված են,

	<ul style="list-style-type: none"> ➤ Եսթիզը գծագրված է, ➤ կոմպոզիցիայի կառուցումը և երանգավորումը կատարված է, ➤ Եսթիզը փոխանցված է նախապատրաստված գործվածքին:
--	--

Խնդիրների բնագավառ 3.

Տարբեր կարատեսակների և ասեղնագործության տեսակների ընտրում և կատարում

Աշխատանքային գործընթացը	Վերցնում է նախապատրաստված գործվածքը, Եսթիզի զարդանախշին համապատասխան ընտրում է թելերի գույներն ու տեսակները, պարագաները, գործիքները, կատարում է պարզ և բարդ կարատեսակներ: Ընտրում և ասեղնագործում է ասեղնագործության տարբեր տեսակի գեղարվեստական աշխատանքներ:
--------------------------------	---

Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> ➤ Եսթիզին համապատասխան թելերի գույները և տեսակներն ընտրված են, ➤ Պարագաները և գործիքները ընտրված են, ➤ Պարզ և բարդ կարատեսակները ընտրված և կատարված են, ➤ Ասեղնագործության տարբեր տեսակներն ընտրված և ասեղնագործված են: Պահպանել անվտանգության տեխնիկայի կանոնները:
----------------------------	--

Խնդիրների բնագավառ 4.

Ժանեսկագործության տեսակների ընտրում և կատարում

Աշխատանքային գործընթացը	Ընտրում է գործվածքը և թելը՝ հիմքով և առանց հիմքի ժանյակի հյուսման համար: Ընտրում է անհրաժեշտ գործիքները և պարագաները, կազմում է գծագիր և օգտվելով ձևավորված աղյուսակի գծագրից և պայմանական նշաններից, գույնի ներդաշնակ զուգագցությամբ հյուսում է ժանյակի օղակ հանգույցները, Էլեմենտներն ու զարդապատկերները՝ պահպանելով համաչափությունը, հաշվարկը և միացման եղանակները: Պահպանել անվտանգության տեխնիկայի կանոնները:
--------------------------------	--

Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> ➤ Գործվածքը և թելը ընտրված է, ➤ Գործիքները և պարագաները ընտրված են, ➤ Գծագիրը կազմված է, ➤ Ժանյակի տեսակները հյուսված են, ➤ Գույնի ներդաշնակությունը պահպանված է, ➤ Համաչափությունը, հաշվարկը և միացման եղանակները պահպանված են: ➤ Անվտանգության տեխնիկայի կանոնները պահպանված են:
----------------------------	--

<u>Խնդիրների քննազավառ 5.</u>	Համակարգչային դիզայնի ստուգում, խմբավորում
Աշխատանքային գործընթացը	<p>Միացնում է համակարգիչը, գործարկում է համակարգչային ասեղնագործության համար նախատեսված ծրագրային ապահովումը, մուտքագրում է նախապատրաստված դիզայնը, ստուգում է կոլթերի և գույների քանակը:</p> <p>Մուտքագրում է տարրական նկար և նկարի հիման վրա ստեղծում է դիզայն՝ օգտագործելով կոլթերի տեսակները:</p>
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> ➤ Համակարգիչը միացված է, ➤ համակարգչային ասեղնագործության համար նախատեսված ծրագրային ապահովումը գործարկված է ➤ Դիզայնը մուտքագրված է, ➤ Կոլթերի և գույների քանակը ստուգված է, ➤ Տարրական նկարը մուտքագրված է, ➤ Օգտագործված կոլթերի տեսակներով դիզայնը ներկայացված է:
<u>Խնդիրների քննազավառ 6.</u>	Համակարգչային ասեղնագործության նյութերի և տեխնոլոգիայի ծանոթացում
Աշխատանքային գործընթացը	<p>Միացնում համակարգչային ասեղնագործության մեքենան, կարգավորում է մեքենասարքավորման աշխատանքի ռեժիմները, կատարում է պարզագույն նորոգման գործողություններ, թելում է մեքենան, լիցքավորում է մաքրոքը: Վերցնում է գործվածքը և ըստ գործվածքի ընտրում է համապատասխան կայունացուցիչը, նախապատրաստված նյութերը ամրացնում է օղակի մեջ և տեղադրում մեքենայի սարքին: Անհրաժեշտ ռեժիմները պահպանելով շահագործում է մեքենասարքավորումը:</p>
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> ➤ Համակարգչային ասեղնագործության մեքենան միացված է, ➤ մեքենասարքավորման աշխատանքի ռեժիմները կարգավորված է, ➤ պարզագույն նորոգման գործողությունները կատարված է, ➤ մեքենան թելված է, ➤ մաքրոքը լիցքավորված է, ➤ ըստ գործվածքի համապատասխան կայունացուցիչը ընտրված է, ➤ նախապատրաստված նյութը ամրացված է օղակի մեջ, ➤ Պահպանելով ռեժիմները մեքենասարքավորումը

	շահագործված է:
<u>Խնդիրների բնագավառ 7</u>	
Վերջնամշակման աշխատանքներ և աշխատանքի ձևավորում	
Աշխատանքային գործընթացը	Կատարված աշխատանքը լվանալ, օսլայել, արդուկել, կտրատել ավելորդ թելերը և ըստ կատարված աշխատանքի ձևավորել:
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> ➤ Կատարված աշխատանքը լվացված է, ➤ Օսլայված է ➤ Արդուկված է, ➤ Ավելորդ թելերը հեռացված են, ➤ Աշխատանքը ձևավորված է:
III. Պատասխանատվություն	Պատասխանատու է կատարված աշխատանքների, որակի արդյունքի, սեփական պարտականությունների պատշաճ կատարման, աշխատանքային կարգապահության անվտանգության տեխնիկայի պահպանման համար:
IV. Լեզուները	Չայերեն-գերազանց Օտար լեզու- բավարար
V. Համակարգիչը	Windows, internet, paint, pe-design
VI. Գիտելիքները	<ul style="list-style-type: none"> ➤ Չարդակիրառական արվեստի տեսակների մասին գիտելիքներ, ➤ Էսքիզի և կոմպոզիցիայի կառուցման վերաբերյալ գիտելիքներ, ➤ Գույնի նշանակությունը կիրառական արվեստում, ➤ Տարբեր տեսակի ասեղնագործությունների կատարման առանձնահատկությունների մասին գիտելիքներ, ➤ Ասեղնագործության և ժանեկագործության համար օգտագործվող նյութերի և պարագաների մասին գիտելիքներ:
VII. Կարողությունները և հմտությունները	<ul style="list-style-type: none"> ➤ Պետք է կարողանա կատարել ստեղծագործական աշխատանքներ, ➤ Նյութեր ընտրելու կարողություն, ➤ Գործիքներ և պարագաներ ընտրելու կարողություն, ➤ Գծանկարի և գունանկարի հմտություն, ➤ Կոմպոզիցիայի կառուցման հմտություն, ➤ Էսքիզը գործվածքին փոխանցելու կարողություն, ➤ Կարատեսակներ կատարելու կարողություն,

	<ul style="list-style-type: none"> ➤ Ասեղնագործության տարբեր տեսակների կատարման հմտություն, ➤ Ժանյակի տարբեր տեսակների կատարման հմտություն, ➤ Աշխատանքի վերջնամշակման և ձևավորման կարողություն:
VIII. Անձի որակական հատկանիշները	Պարտաճանաչություն, կարգապահություն, ուշադրություն և դիտողականություն, համագործակցելու պատրաստակամություն, հանդուրժողականություն, նորն ընդունելու պատրաստակամություն, հետաքրքրություն նորագույն տեխնիկայի նկատմամբ, ստեղծագործական մտածելակերպ ունեցող:
IX. Որակավորման մակարդակը	ՈՄ-3